



ՊԱՏՄԱ-ԲԱՆ ԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԼԵՎՈՆ Գ. ԹԱԳԱՎՈՐԻ ԺԱՄԱԳԻՐԳԸ

ՀԱՅ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ ՄԸ



անի մը օր առաջ նոր հայտնութեան մը առջեւ գտնվեցանք, ինքնին կարենոր՝ հայկական միջնադարյան գրչութեան, նկարչութեան ու զարդանկարչութեան երբայկ իրենաներով, ինչ որ մեծ ուրախութիւն պատճառեց մեզի, վասնզի Օշին թագավորի ձեռագիր ժամագրքին նվիրված մեր նկարագրեմն շուրջ քսան տարի հետո, այսօր պատահութիւնը կունենայինք տեսնելու, նկարագրելու և լուսանկարել տալու Օշինեան ավելի քան քառասուն տարի ինն եղող առջայական երկրորդ թանկագին ժամագիրը մը, որու մասին ցարդ ո՛չ ձեռագրաց ցուցակներու մեջ և ոչ ալ որեւէ ուսումնասիրութեամբ որեւէ ակնարկութեան հանդիպած չենք։

Ներկա տարվո իրոյնքերի 14-ի կիրակիին, Ս. Պատարագը լրանալուն, մեզի ներկայացավ պրն. Jean Lévy անուն փարիզարնակ երիտասարդ հրա մը, տեսակցութեան մը խնդրանքով Փոլսաց հաղորդելու որ հայկական արքայական ձեռագիր մը ունեի՝ զոր կողմեր ցույց տալ, լսած ըլլալով որ կզրպեինք հայերեն ձեռագիրներով, Հագիվ մագաղաթի ընտիր քանի մը էջերը դարձուցած, նկատեցինք որ Կիլիկիան արքայական մատյան մըն էր, ժամագիրքի մէտ Լեւոն Գ. րագավորին։ Մեր շատ բնական հարցումին ի պատասխան՝ պրն. Լեւի հաղորդեց որ ձեռագիրը գնած էր փարիզյան գրատունն մը։ Զեռագրի սկիզբի կողքին ներքին երեսին


վրա ուշադրութիւնս գրավեց գերմաներեն լեզվով մեքենագրված էջ մը, մանրատառ, առանց ստորագրութեան և թվականի, վասնզի գրութիւնը կիսատ էր։ Հավանաբար շարունակութիւնը հաջորդ էջին վրա էր և չուզեցինք որեւէ կերպով եղծել վերջին փակցված այդ մեքենագիրը, որ համառոտ մեկ նկարագրականն էր ձեռագրիս։ Ո՛վ կրնար տեսած ըլլալ այս կարեւոր ձեռագիրը, քննած և անոր նկարագիրը փակցուցած ներքին կողքի երեսին վրա։ Կարելի՞ էր արդո՞ւր ընդունիլ որ ձեռագիրս մաս կազմած ըլլար Սաքսոնիո Հանրի իշխանին անձնակալն Տոխ հավաքածոյին, վասնզի հանդուցյալ իշխանը սիրահար էր հայերեն ձեռագիրներու և 1911-ին շրջած էր Մերձավոր Արեւելի հայաշատ կեդրոնները և աչքն անցուցած կարեւոր ձեռագիրներ ու շատերը գնած։ Կարելի չէ՞ր նույնպէս խորհիլ որ վերջին պատերազմի տարիներուն Գերմանիո մեջ պատահած սեղահանութիւններու հետեանքով, ուր շատ-շատերու հետ Փարիզ կամ այլուր փոխադրված հայերեն ձեռագիր մըն էր, որուն զրեթի բոլոր էջերուն վրա գտնված աչքառու զարդանկարները կրնային ձեռք ձեռք անցնելու առիթ ըլլալ, մինչև որ հասկցվեր թե ան հայոց մեկ արքային անձնական ժամագիրքն էր և հետեաբար թանկագին, խնդրեցինք պրն. Լեւին որ հաճեր գեթ մեկ կամ կես օրվան համար մեզի վստահիլ ձեռագիրը, որպեսզի կարենայինք դայն քննել և ցուցակագրել։ Բարեսիրտ հրան, տեսնելէ հետո ձեռագրաց մեր մեկն ավելի ցուցակները, սիրով վստահեցավ զայն թողուլ, պայմա-

նամ, որ նույն տրվան ժամը 7-ին իրեն վերադարձնեինք զայն, լուսլայն հասկցնելով որ պիտի շուգեր վրային գիշեր մը անցնել, Հավանեցանք և մեզի տրված այդքան մը ժամանակը բավական եղավ որ կարելի ուշադրությամբ քննեինք ժամագիրքս ու նկարագրեինք և հետո վերադարձնեինք զայն:

ԺԳ. դարու վերջին քառորդի սկզբին զըրված ժամագիրքս, արդարև, կուգար ավելնալ այն բոլորին վրա, որոնք այդ դարու հայ պրշության և մանրանկարչության բարձրագույն զարգացման շրջանը կընդունեն, հատկապես Կոստանդին Կաթողիկոսի և Թորոս Քհնյ. Ռոսլինի շրջանին ակնարկությամբ, վասնզի առանց չափազանցության կարելի է խոստովանիլ, որ ասոնց օրով կիլիկյան գրչագրական, մանրանկարչական և զարդագրական արվեստները արձանագրեցին իրական ոսկեդար մը:

Կիլիկիո Հայրապետանոցի և արքայական տան կողմի ընդունված զգեստի և զարդ ու զարդարանքի, ինչպես նաև արքայական մատուռներու ներքին դիրքի և սարքավորման վերաբերմամբ:

Կիսատ հիշատակարանն կտեղեկանանք որ ձեռագրիս գրիչն է Ստեփանոս Վանկացի ու ստացողը «որդի Հերումի, որդի Կոստանդինի և մայրենի ազգաւ որդի Չապէլ Թագուհոյ, որդւոյ Լեոնի Թագաւորին Հայոց առաջնոյ յիւրիկանաց», որ է Լեոն Գ. Թագավորի իշխանության օրով: Ձեռագրիս երկու նկարները և բոլոր էջերը զարդարող զմայլելի ծաղկովաները աներկբայորեն գործն են Հոռմկլայի դպրոցին մեծագույն մանրանկարիչը եղող Թորոս Քհնյ. Ռոսլինի, այնքան նմանությունները ակնրախ են Ռոսլինի գործերում և ձեռագրիս բոլոր վրձիններում հետ: Կոստանդին Բարձրաբերդցի Կաթողիկոս թեև



Մի նմուշ Լեոն Գ. Թագավորի ժամագրից

Առաջին ակնարկով նկատեցինք որ ձեռագրիս վերջը դրված հիշատակարանը կիսատ էր, երրորդ էջին հաջորդող թերթը կամ թերթերը կորսված ըլլալով, նկատելի էր նույնպես որ ձեռագիրս, ինչպես որ սովորություն է, ընծայական լուսնի, բայց այս պակասը կը փոխարինեն Լեոն Գ. Թագավորի շատ հաջող և մեծադիր նկարը, իր բացառիկ հաջողությամբ, իբր թանկագին նպաստ

վախճանած և սակայն իր հիշատակը, իր թողած անմահ գործերը կշարունակեն, իր մահեն հետո ալ, հովանավորել հայ գրչություն ու հայ արվեստը ու Լեոն Գ. Թագավոր և Կեռան Թագուհի կհանդիսանան նույնքան հովանավորները նույն ազնիվ արվեստներում: Փարիզի և Լոնդոնի թանգարաններում մեջ մենք քանիցս առիթ ունեցանք, հոգ չէ թե հարևանքի կերպով, աչքն անցնե-

լու բյուզանդական միենույն շրջանի հատուկ հունարեն ձեռագիրները. անպայման որ շատ ավելի արվեստ ու ներշնչում կա հայկական ձեռագիրներու գրին, զարդին, նկարին ու մանրանկարին մեջ, հակառակ անոր որ Բյուզանդիոն դեռ մինչև ժ. Գ. դարը բնորոշակ ու հարեան կայսրություն էր, եվրոպական արվեստին ու մշակույթին շատ ավելի հաղորդ է մշտական հարաբերության մեջ Աթենքի, Հռոմի ու Վենետիկի հետ, Հայոց արքաներու համար գրված ավետարան, ժամագիրք, ճաշոց և այլն, շատ ավելի ճոխությամբ գրված ու ծաղկված են, քան մեր տեսած բյուզանդիոնի կայսր ու կայսրուհիներու համար գրված նույն տեսակի մատյանները:

Բեն մեղի համար տրված ժամանակը անրևական էր, բայց մենք կրցինք այդքանին իսկ օգտագործել՝ առաջին համար ամբողջական նկարագիրը այս շատ հետաքրքրական մատյանին, իբր ցարդ հայ և օտար բանասիրության ծանոթ հայկական հնագույն ժամագիրքը:

Հին թիվ՝ չունի. 1274 (?):

Թուրք՝ 190 (=380 էջ, մատիտով թվադրված).— Մեծուրյուն՝ 16×12×4 սանտիմետր.— Գրություն՝ միասյուն.— Տողք՝ 13.— Նյութ՝ թավիշի նման նուրբ, մաքուր մազաղաթ.— Կազմ՝ շաքանակագույն կաշեպատ փայտյա. կողքերուն ներսի երեսները ծածկված են թաց վարդագույն և կանաչ գիծերով մեքաքսե նուրբ կերպասով, իսկ արտաքին կաշեպատ երեսները ունին զարդական տաղտամներ.— Դատարկ քուղը՝ հատ մը միայն ի վերը.— Հանգամանք՝ բավական լավ պահպանված, հակառակ իր բարձր հնությանը, ընդունելով որ ներսի բազմաթիվ թերթերուն ու ամբողջական թուղթերուն հափշտակությունը նոր ժամանակի բարբարոսություն է, հասկցվելն հետո որ ձեռագիրս արքայական ժամագիրք մըն է, հին, նկարազարդ և հետևաբար թանկագին ու հետաքրքրական, Գրված ու ծաղկված է, առանց վերապահության, Հռոմկա դղյակի հայրապետական դարպասին մեջ, ձեռամբ Ստեփանոս Վահկացիի, 1274-ական թվականներուն ու ամենայն հավանականությամբ ծաղկված Թորոս Ռոսլինի մոգական վրձինով, 1269-ին կհիշվի արդեն Ստեփանոս Վահկացի գրիչս, Ձեռագրիս ներկա կազմը սկզբնականը չէ, որ անկասկած արծաթապատ էր իբր արքայական մատյան, Ինչպես տեսանք, ձեռագրիս մեջն ղգրախտաբար կպակսին բազմաթիվ թուղթեր, ծանր հարված մը տալով անոր նյութական արժեքին, Այսպես՝ 13, 94 և 102 էջերն հետո մեկ-մեկ

թուղթ կպակսին. պատահմունք թե հատկապես զողջված զարդական ու մանրանկարական արժեքներուն համար, 115-րդ էջն հետո կպակսին երկու թերթ, իսկ 108-րդն հետո՝ բազմաթիվ, նմանապես 83 և 103-րդ էջերն հետո կպակսի 12 թերթնոց ամբողջ պրակ մը ու 167-րդն հետո նույնիսկ երկու սյուսկ, Բարեբախտաբար բոլոր այս պակասները բավարար կերպով կարելի է լեցնել պահված առաջին և վերջին բառերու շնորհիվ, որոնք բարեղպ կերպով կմընան, Մնացած նկարներն ու զարդական մասերը անեղծ են և հրաշք մը պետք է նկատել, որ ժամագիրքիս սկիզբի երկու թանկագին նկարները անհետացած կամ զողջված չեն.— Սկզբնապես՝ հարյուրե ավելի, կկազմեն ձեռագրիս աչքառու մասերն, միմյուրն ալ ոսկերովազ և որոնց 14-ր թուղթի, ինչպես առաջին խորանի տակի նուրբ չքնաղ թուղթի, մնացածներն ալ ըլլալով հնագույն և ալլազան մոտիվներու սքանչելի հորինվածքներ, Ամբողջովին զարդագիր սկզբնատառեր ունին, և ամենն գեղեցիկները՝ 72, 77, 97, 99, 100 և 111-րդ էջերը. իսկ իբր ամբողջական կենդանագիր նկատելի են 2, 10, 19, 20, 24, 33, 74, 100, 108, 116-րդ էջերու սկզբնատառերը, որոնց մեջ կարելի է առաջնութունը տալ 19-րդ էջի գեղեցիկագույն սկզբնատառին, որ նրբորեն կենդանաշնակվի առաջին խորանազարդ էջի բոլոր զարդական մոտիվներուն հետ, Կարելի չէ պահ մը կանգ շտանել անոնցմե մեկ քանիններուն առջև. այսպես՝ 74-րդ էջի վրա երեք թուղթներ, էջ 100-րդ՝ ապակս մը կամ գալ մը, որ վիշապի մը պոչն բռնած է և դեռ ուրիշներ.— Գիր՝ ծայրն ծայր նույն զմայլելի բոլորգիրը տպագրի հանգույն.— Վերևազիտ՝ խորանազարդ միակ էջին վրա երեք տող, զմայլելի երկաթագիր, համակ ոսկեախալ.— Լուսանցազարդ՝ թիվով 155 հատ, բոլորն ալ իրարմե հաջող, ալլազան ու անհամեմատորեն շքեղ, որոնցմե 23 հատը միայն կենդանիներու Ասոնց մեջ այնպիսի հրաշալի ծաղկումներ կան, որոնց ներքի դեռ ճրեկ չորցած կարելի է համարել, այնքան թարմ, այնքան լուսավոր, Մարդ կտարվի պահ մը կարծելու որ արվեստագետ նկարիչը իր թովանդակ տաղանդը այս լուսանցազարդերուն նվիրած է, ստեղծելու. հղանալու համար թուղթներու, նապաստակներու թաթիր կամ թեքու, Դիտելի է նույնպես որ նկարիչը այս լուսանցային նկարչության մեջ դրած է նաև այնպիսի օրինակներ, որոնք իր չքնաղ արվեստին երեք հաջորդական phase-երը կնիկալաջանեն, նախ

դժադրութիւնը, ապա ծաղկումը և հուսկ հետո ոսկեդրվագ վերջին աշխատանքը։ Ասոնցմե ղուրս մնացած բոլոր լուսանցազարդերը կենրկայացնեն ալազան բույսերու սքանչելի հավաքածո մը, նույնքան ալազան մոտիվներով ու ծաղկումով, առանց տարակույսի Թորոս Ռոսլինի վրձինն, մոտիվներ՝ խառն պարսկական և շինական, որոնք այնքան նմանութիւններ ունին Երուսաղեմի և Վենետիկի ծանոթ ավետարաններուն հետ։ Կտարվիմ խորհելու որ ժամադրքիս այս դասական բոլոր ծաղկումները միայն Ռոսլինի գործերը չեն։ Իր աշակերտներն ալ կարենոր բաժին մը ունեցած են հոն, ընդունելով

բար կտրված ու հանված է և տեղը զգուշութեամբ նուրբ թուղթով մը կարկտված։ Մնացյալները՝ էջ 2, 10, 19 և 178, խորանի հանգույն և կրնամ ըսել շատ ավելի խնամված ծաղկումներ են, միշտ ոսկի հատակի վրա, ճոխորեն ծաղկազարդ ու տերեւազարդ, մեջը թռչուններով։— Նկարել՝ երկու հատ միայն։ Առաջինը՝ ոսկի հատակի վրա կենրկայացնեն սուրբ մը՝ հավանաբար Ս. Ներսէս Շնորհալին, կանգնած տաճարի մը ներսը, հայրապետական աթոռին և խորանին միջև, որուն առջև դուռը լայնորեն կրացվի և սուրբը, ազոթողի դիրքով, կիսութա ներս մտնել, Շնորհալիի ձեռքերը բաց են և երկարած ու



Մանրանկարչութեան մի նմուշը— Լևոն Գ. Բագավորը աղօրելիս։

հանդերձ որ, ինչպէս պիտի տեսնենք, ձեռագրիս այնքան հաջող և այնքան իսկատիպ երկու նկարները ու խորան և կիսախորանները անպայման Ռոսլինի հանճարեղ տաղանդի գործեր են։— Խորանը՝ հատ մը միայն, սկիզբը, փոքրագիր, ոսկի դաշտի վրա լազվարթ շատ սիրուն վարդյակներով, որ իր շուրջի մեծ լուսանցազարդով, կախարդող թռչնազիր սկզբնատառով և ոսկեդեղ երեք տող վերնագրերով կենրկայացնեն անբաղդատելի հանդիսարան մը ծաղիկներու և գիրերու։— Կիսախորանը՝ հինգ հատ միայն, ո՛վ գիտն որքան ավելիներ ինկած ու անհետացած իրենց ամբողջական թուղթերով, 94-րդ էջի կիսախորանը դժբախտա-

լուսապսակ գլուխը կնայի խորանին վերի անկյունն են յղմարված և օրհնութիւն տալու վիճակի մեջ ձեռքի մը, Հայրապետը զիսպագ է, առանց վեղարի կամ թագի և հագած է հունաձև գունավոր շապիկ, կարճ շուրջառ, ծիրանեգույն փորուրար և խաչանիշ սպիտակ եմիփորոն։ Ամբողջ նկարը առնված է նեղ, սիրուն եզրազարդի մը մեջ, Երկրորդ նկարը, նույնպէս ոսկի հատակի վրա, իսկապէս որ խիստ հետաքրքրական է, մեկն ավելի տեսակետներով ու կենրկայացնեն Լևոն Գ. Բագավորը, բոլորովին նման ցարդ մեր տեսած և Թորոս Ռոսլինի կողմն վրձինված նկարներուն կամ արտահայտութեանց։ Բագավորը ծունը նրս-

տած է, գլուխը այն դիրքով՝ զոր կտեսնենք իր ա՛յլ նկարներուն մեջ, ձեռքերը բաց կա-
ղոթեն խորանի մը առջև՝ որ կվերջանա
ciborium-ով մը, հորանը՝ որ ոսկի ե-
ղերազարդ կարմիր կտավե վարագույրով մը
ծածկված ըլլալ կթվի, իր մեջ կկրն, փայտե
գալարուն պատվանդանի մը վրա, կարմիր
ձոխ կտավով ծածկված սեղանի մը մեկ
մասը միայն, վրան ոսկի սկիհ մը՝ որուն
մեջ կերեա միայն Մանուկ Հիսուսի գլուխը,
ոսկի նիմրուսով և աչ ոտքը սուրբ սկիհեն
դուրս անկարած դիրքով, դեպի թագավորը՝
որ երախտագետ, շնորհապարտ դիրքով է
ափելի՝ քան աղոթողի նկատելով որ երե-
ցածը պատարագամատույց սեղանն մը ա-
փելի մկրտութեան հաստատումն ափազանի
մը կերպարանքը ունի, պիտի համարձակինք
ըսելու որ թագավորը իր այդ դիրքով շնոր-
հակալութիւն կհայտնէ Աստուծոյ, իր իշխա-
նազուն որդիներին մեկուն ծննդան առթիւ,
հաւանարար երեխային մկրտութեան օրը:
Դիտելի է որ Հիսուս Մանուկ ամբողջովին
բնկողմանած է սկիհին մեջ, գլուխը միայն
կերեա վիզեն վեր և աչ ոտքն ալ սկիհեն
դուրս երկարած է, դիրք մը՝ որ իսկույն
մտաբերել կուտա ձեռնադի մը կամ ափելի
մկրտութեան մը գաղափարը: Նկարս, միակը
իր տեսակով հայկական և նույնիսկ օտար
կրօնական մանրանկարչութեան մեջ, իսկա-
պես ուշադրութեան և առանձին ուսումնա-
սիրութեան արժանի անուշով մը կներկայաց-
նե: Հոս, թագավորը հազած է ոսկեհիւս
լայն պարեգոտ մը, որմէ դուրս երկարած
են սպիտակ մետաքսե ճոխ ներքնակի մը
լայն թեքը և այս ամբողջին վրա ոսկե-
հիւս և մարգարտահեռ դեղնօրակ լայն
շղարշ մը, որ եմփոքորեն ձեռով ծածկած է
ուսերն ու կուրծքը և դեպի վար անկարած:
Գանկին ետեի մասը ամբողջովին ծածկած
վիճակով, գլխուն վրա կկրն սպիտակ գդակ
մը, զոր իրենց թագին կամ գլխանոցին տակ
ունենին արեւելեան թագավորներ ու գրեթէ
ամեն դասու եկեղեցականներ: Ծակատը
բարձր է և դեմքը ծածկված իր ա՛յլ նկար-
ներուն վրա տեսնված սև երկար մորուսով:

Թագավորին ետե կանգնած է միջահասակ
անձնավորութիւն մը, որ ձեռքերուն մեջ
կկրն արքայական ոսկի և գունարազարդ թա-
գը, կիլիկյան թագավորներու թագի նմանո-
ղութեամբ: Ունի թագավորին կրած սպիտակ
գդակը. գլուխը ափելի մազոտ և դեմքը ծած-
կված լայն և կարճ մորուսով: Իսկ գանկին
առատ մազերը դեպի վար երկարած, գան-
գուր: Հազած է վարդազույն պարեգոտ
և կապույտ երկար վերարկու: Ո՞վ է սակայն
թագակիր այս անձը, Բրյուսելի A. Stoclet

հաւաքման մեջ՝ կա Վեռն Գ. Թագավորի
հորեղբոր Պարոն Վասակի և իր երկու որ-
դիներուն (?)՝ Կոստանդին և Հեթում իշխան-
ներու (1) ստացած Ավետարանը, որուն
սկիզբը կտեսնվի Ճանճիի քերդատեր այս
Պարոն Վասակի և երկու որդիներուն (1)
նկարը, երեքն ալ ծնրագիր Աստվածամոր
առջև, որ դրկած ունի Հիսուսը, Հունական
զգեստավորումով և ոտքի վրա դիրքով գլու-
խը բաց եպիսկոպոս մը, ձախ ձեռքը դեպի
Տիրամայրը երկարած, աչ ձեռքը հանգըն-
ցուցած է Վասակի աչ ուսին: Արդ, մեր ժա-
մագիրքի նկարին և Ավետարանի նկարին
մեջ եթէ ոչ զգեստավորումի՝ գեթ դեմքերու
մեջ բացորոշ նմանութիւն մը կա: Երկուքին
մեջ ալ նույն Պարոն Վասակն է, միայն թէ
Ավետարանին մեջ Վասակ չի կրնր մեր ժա-
մագիրքի իր նկարին մեջ տեսնված սպի-
տակ գդակը: Հազած է նույն ծիրանագույն
պարեգոտը և կարմիր վերարկուն, որուն
դուրսի կողմը եզերված է գորշագույն մուշ-
տակով, ըստ պրն. Stoclet -ի: Ասկէ զատ
ժամագիրքին և Ավետարանին նկարներուն
մեջ գրեթէ նույն մատուռն է ո՛չ միայն եր-
կուքին վերն տեսնված և կիսովին ծալված
կարմիր վարագույրով, այլև իր բարձր
պատուհաններով: Երկու ձեռագիրներուն
ժամանակի տարբերութիւնը հազով տասը
տարի կարելի է դնել, եթէ ոչ ափելի նվազ:
Ինչպես ինքը, Լեռն Գ., նմանապես իր հո-
րեղբայրը Պարոն Վասակ եղած է բարեպաշտ
զորական մը, որ շրջանի ձկնղեցիներուն
ճոխ նվերներ հիշատակ թողած և Միսի մեջ
կառուցած է եկեղեցի մը: Կհամարձակինք
կրկնելու որ երկու նկարներու ծաղկողը
աներկբայորեն նույնն է, Ռոսլին՝: Նույնն
են նաև, երկուքին մեջ ալ, Վասակի դեմքե-
րը, ձեռքերը և գրեթէ զգեստավորումը: Պա-
րոն Վասակ մեռած ըլլալով 1284-ին, ժա-
մանակով ալ կհարմարի գրչութեան թվա-
կանին հետ, 1273 կամ 1274: Մնաց որ Թու-
րոս Ռոսլին թագածառանգ Լեռնի սիրական
ու վստահելի պալատական նկարիչն էր և
շատ բնական էր, որ անոր պիտի վստահեր
Ստեփանոս Վահագնիի գրել տված իր անձ-
նական ժամագիրքին նկարազարդութեան
ալ:— Մանրանկար՝ հատ մը միաճ, 201-րդ
էջի աչ լուսանցքին վրա, որ կներկայացնէ
ոսկեղեղ լուսապսակով ավագ եպիսկոպոս
մը: Սա կապույտ պարեգոտին վրա կկրն
ծիրանագույն շուրջատ և ոսկի խաչանիչ

¹ Arménag Sakislian. „Pages d'Art Arménien“, 1940, Փարիզ, էջ 16, 17 և այլն:

² Նկարիչը Վահագնի է և ոչ Թորոս: ԽՄՈ. ԵԼԱՍԿԻ:

սպիտակ եմփորոն, Ձախ ձեռքին մեջ բռնած ունի ռակեզոժ կազմով Ավետարան մը, որուն վրա երկարած է աչ ձեռքը, Կենթադրեմ որ ձեռագիրս ունի բազմաթիվ սյլ մանրանկարներ, որոնք անհետացած են իրենց թուղթերով:

Գրիչ՝ Ստեփանոս Քհնյ. Վահկացի.— Ստացող՝ Լեոն Գ. Թագավոր Հայոց.— Տեղի՝ անհայտ (Սիս ?).— Ժամանակ՝ անծանոթ՝ հավանորեն 1274.— Մղկող՝ անծանոթ՝ հիշատակարանիս վերջին թերթի կորուստով, բայց աներկբայորեն Քորոս Քհնյ. Ռոսլին: Ձեռագիրս այժմու տերն է՝ պրն. Jean Lévy, 165. Rue de la Pompe, Paris, 165:

Մատյանս է՝ ժամագիրք, մազադաթյա, միջակ դիրքով, ամբողջովին նկարազարդ ու արժեքավոր, իբր արքայական ժամագիրք, որ կնեկայանա հայտնություն մը, իր ժամանակի նույն դպրոցի գրչությանց հարաբերությանմբ: Դժբախտաբար մեզի տրված ժամանակը շատ կարճ ըլլալուն, դուրսութուն շունեցանք իր բոլոր մասերը մի առ մի բաղդատելու ձեռագիր և տպագիր մեկն սովելի օրինակներու հետ, մանավանդ որ ամբողջ մատյանը ունի մոտավորապես ևրեք պակաս պրակներ, իր զանազան բաժիններուն մեջ: Նկատելի է որ ժամագիրքս՝ որուն երգեցողական մասերը ամբողջովին խաղաղրված են, ինչպես Օշին Թագավորի (1319) նույնպես մազադաթյա ժամագիրքը, յավական համառոտված է: Ասիկա չի նշանակեր սակայն՝ որ ան կանոնական ժամագիրքն էր՝ որ կիրարկելի էր իր ժամանակի բոլոր եկեղեցիներուն մեջ, այլ թե Թագավորի առձեռն աղոթագիրքն ալ էր, վասն զի իրմեն շուրջ քառասուն տարի հետո Օշինի համար գրված ժամագիրքը, Մաղմոսի, Շարակնոցի և Տոնացոյցի բաժիններով շատ ավելի ընդարձակ է քան ներկայիս գործածական ժամագիրքը (տեսնել՝ մեր ՇՆԿԱՐԱԳԻՐ ՕՇԻՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՁԵՆԱԳԻՐ ԺԱՄԱԳԻՐՔԻՆ (1319), Անթիլիաս, 1933): Կհուսանք նոր պատեհություն մը ձեռագրիս ամբողջ բովանդակությունը մանրամասնորեն քննել ու նշանակել բոլոր փոփոխակաները, իբր հավելված ներկա հապճեպ ուսումնասիրության:

Ձեռագիրս կրովանդակե՝

1.— էջ 1.— Տեսոն ներսնի Հայոց Կարողկոսի ասացեալ աղաւթք բստ ԽԻ. Ժամու աւուրն. տուն ԻԿ.— Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ... ամբողջ և համաձայն առձեռն օրինակներու:

2.— էջ. 21.— Նորին յԱմենատուրք Երուզուրին զաւանդին.— Հաւատով հաւատամ ի քեզ Երուզուրին անմահ Հայր և

Որդի և Հոգի Սուրբ: Հաւատամ և խոստովանիմ քեզ Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ, անսկիզբն և անծին անեղ և աներ բան ուստեք և անժամանակ, անապական և անփոփոխելի... Հայր և Որդի և Հոգի Սուրբ Երուզուրին և մի աստուածովին, անբաժանելի, զաւրացո՝ զԵրիտասարդսակ քաթաւուն ամենայն Հայոց զԼեոն հանդերձ որդւովք իւրովք ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ... Ապա կուգա գիշերային ժամերգութեան մասը, որուն սկիզբը ինկած ու կորսված է:

3.— էջ 40.— Երգ գիշերային պաշտամանց.— Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր... ամբողջովին ձայնագրված, կարմիր խաղերով:

4.— էջ 45.— Եւ Լս խաղաղութեան: Ջարթուցեալս ամենեքեան...

5.— էջ 46.— Մարտիրոսաց Լ. ապաշխարութեան հարիւր Տէր ողորմեա ի քիւ: Կիրակէիցն և աւրունական տաւիցն՝ Երեմ Տէր ողորմեա եղանակաւ.— Ջրէն գոհանամք Տէր Աստուած մեր որ շնորհեցնր...

6.— էջ 53.— Քարոզ Երանելի կանոնի և իբրև զի բարոյ.— Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան...

7.— էջ 60.— Զկնի բազաւորին ասին սոփա.— Վասն ի գիշերի, ի տուրջեան և յամենայն ժամու...

8.— էջ 62.— Քարոզ՝ Մի նախաճիւր կանոնով և Խոստովանի.— Վասն ուղղելոյ զգնացս մեր...

9.— էջ 67.— Քարոզ՝ Ողորմեա կանոնի և նեղութեան.— Վասն գտանելոյ մեզ շնորհ և ողորմութիւն ի բա...

10.— էջ 70.— Երգ Երեմ Մանկանց.— Աւրհնելալ Եւ Տէր Աստուած հարցն մերոց... Քարոզէ սարկաւազն՝ Եւ Լս խաղաղութեան.— Եկեալքս ամենեքեան ի սուրբ կաթողիկէ... Ասոր կհաջորդե՝ ըստ առձեռն ժամագիրքերու՝ առաւիտյան և ճաշու ժամերգութիւնները և երեկոյան կարգավորութիւնը: Որ րնակեալն է յօգնութիւն Բարձրելոյն սաղմոսին ի վերջ կա՝ կարմիրով՝ հետեւյալ ծանթութիւնը. «Տէրունական տաւիցն ոչ ասի Հայր զթաճն և ոչ սաղմոս: Այլ քարոզէ սարկաւազն ըստ պատշաճի աւուրն և ասի արձակման աղաթքն: Եւ աղուհացիցն զկնի Հայր գթած աղաթիցն ասի Տէր Ամենակալ Աստուած Արքահամու...»:

11.— էջ 360.— Մաղմոս Խաղաղականին, յորժմ ներել կամին.— Եկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր... Ասոր կհաջորդե՝ հետեւյալ մանրատառ ծանթութիւնը, որով կվերջանա ժամագիրքն ալ՝ «Յերիցադունիցն ասին զաղաթս ելեալք ի խոնարհ

կալով, ասեն դիտարկված թան քանսն որպէս և գրեալ կալ ճախ ի գիրքս, և նա պատասխանէ և արհնեսցեն մի զմի և շնորհն զթողութիւն միմեանց. և երթայցն ամենեքեան յիրաքանչիւր յարկսն հանգչելով ի խաղաղութիւն մինչ զի և հնչէ փողն ազգեցութեան աղաթելոյ ի մէջ գիշերի և քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք պատիւ և երկրպագութիւն յամենայն յարարածոց իւրոց, ամէն, ամէն, ամէն:

Հիշատակագրութիւն

Ա.— էջ 377 (գլխավոր հիշատակարան). — Փառք միայնոյ անբաժանելոյ անհասարակոյ հոանձնեան և անեղբայկան Սուրբ Երրորդութեան և մի աստուածութեան ի վերնայնոյ հրաբուխից գոտաբտակացն և ի ստորարնակ անգամնացա յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից, ամէն, ամէն:

Շնորհիւ Տեառն և ամենառատ (կարմիրով) ողորմութեամբ ամենակարող և անճառ գարութեան նորա և գերագոյակ անեղբայկան իմաստութեան արգահատութեամբ Հոգւոյն Սրբոյ, աւժանդակեալ կատարեցի զաստուածամարդեան և ախրապատում տառաւարգարէից և զքրիստոսայայտ տնաւորէութեան բացահայտութիւն, առաքելական և աւետարանական թղթովք, որ է զանձ ծածկեալ բազմաբեղուն և շքնազատիպ մարգարիտ և ակն յուսատու և սոփեբայեան ոսկի որ և դէպ է ըստ տեսողին, իրրե ոսկի ընդ սարդիոն յեռեալ և կինամոմոն տաշխիւր

կնդրեաց խնկեալ անմահաբար հոտիւք, զոր նուաստս յորդիս հեղեղեցո(յ) և փցուն գրիշս, Ստեփան(ն)ոս Վահկա(յ)ցի, յանդելեալ կատարեցի հրամանաւ և ծախիւր քրիստոսապսակ յարեպաշտին և աստուածունակ արքային Հայոց Լեոնի սրդոյ Հերմոյ՝ որդւոյ Կոստանդիա և մայրնի տգգաւ որդի Զապէլ թագուհոյ, որդոյ Լեոնի քաւաւորին Հայոց ասաշնոյ յԹորինանց, որ ի յարմատոց բարեաց դաւա զերազանց յարունակ ստեղնեալ անուշահոտ և քաղցրաճաշակ պաղովք աստուածայնոցն առջեւ կտակարանացն ըղձիւք, և մեծատենչ ևս որ առ Տէր հրով սիրոյն փախաքմամբ միշտ վառեալ, որ և յաղագս անբաղդատելի սիրոյն առ Աստուած և առ ամենայն ուղղափառ քրիստոնեայս, բազում անդամ դանձն ի մահ եդ, աւրինակ եղեալ... (դժբախտաբար կպակսի հիշատակարանիս շարունակութիւնը, հաջորդ թուղթը կամ թուղթերը ինկած ու կորսված ըլլալուն):

Բ.— Այս գլխավոր հիշատակարանիս ստորին յուսանցքին վրա կկարդանք հետեւայնոտր գիր և վերջին ժամանակի երկտող հիշատակարանը:

Գրեալ է ժամագիրքս յամի Տեառն 1224 և ի թուին Հայոց 2Ճ29-ին, Զեռամբ Ստեփան(ն)ոսի Վանկեցոյ:

(Արտատպւած «ՀԱՍԿ» հայագիտական տարեգրքից, Բ. տարի. 1949-50 թ.):

